ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«28» հոկտեմբերի 2024թ. № 1412-Լ

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԱՆՁԱՆՑ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ (ՈՉ ԱՆՁՆԱԿԱՆ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝
   1) Անձանց նույնականացման հնարավորություն ունեցող ծառայողական (ոչ անձնական) տեխնիկական միջոցների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

10/28/2024

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731 ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2024թ. հոկտեմբերի 28-ի N 1412-Լ հրամանի

# Ց Ա Ն Կ

## ԱՆՁԱՆՑ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ (ՈՉ ԱՆՁՆԱԿԱՆ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1. Հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելիս, որպես անձանց նույնականացման հնարավորություն ունեցող տեխնիկական միջոց, կիրառվում է՝

«**Samsung Galaxy Tab S9**» մակնիշի համակարգչային պլանշետը:

2"Համակարգչային պլանշետում կապի օպերատորի կողմից տրամադրված sim քարտի միջոցով հասանելի է լինելու անվտանգ VPN կապուղի Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Ոստիկանության համակարգերի միջև, որի միջոցով նախատեսվում է հարցումներ ծրագրավորված ինտերֆեյսում (API):

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ